



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՈՐՈՇՈՒՄ**

----- 2017 թվականի N°Ա  
քաղ. Երևան

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎԱՆՈ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ N°0440  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետը և 12-րդ հոդվածի 1-ին մասը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 78-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի N°231Ն որոշումը և հաշվի առնելով անհատ ձեռնարկատեր Վանո Դավթյանի 2017 թվականի օգոստոսի 30-ի և վերջինիս սնակության գործով կառավարիչ Գևորգ Գևորգյանի 2017 թվականի սեպտեմբերի 8-ի գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Կասեցնել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի սեպտեմբերի 17-ի «Անհատ ձեռնարկատեր Վանո Դավթյանին ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» N°502Ա որոշմամբ անհատ ձեռնարկատեր Վանո Դավթյանին տրամադրված ռադիոհաճախականության օգտագործման N°0440 թույլտվության գործողությունը՝ մինչև ըստ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Էրեբունու հարկային տեսչության դիմումի անհատ ձեռնարկատեր Վանո Դավթյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

2. Ընդունել ի գիտություն, որ անհատ ձեռնարկատեր Վանո Դավթյանին տրամադրված ռադիոհաճախականության օգտագործման №0440 թույլտվության կասեցման ժամանակահատվածում ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները ենթակա են վճարման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի օգոստոսի 30-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան  
----- 2017թ.